բեցաւ ի Զ ժամէ աւուրն մինչև Ը–երորդ ժամն, մինչև աստեղք երևեցան և զի լուսինն ևս ծնունդ էառ։

Ուրբաթի օրս (4 Օքտոմ.) զՂաւուխնի Սարգիսն հանեցին ի գնտանէն բազում ջանիւ և դրամով։

Շաբաթ (5 Օքտոմ.). Պայրամ Տաճկաց։ Օրս ի յՈւսկիւտարն գնացի մօտ Յոհան վարդապետն մեծ, զի գնալոց էր։

Զ–իս օր Կիրակի. բարեկենդան Աստուածածնի։ Վարդապետն ի Սուրբ Նիկողոս եկն վասն Տէր Յովանէսին էջմիածնայ՝ ժողովի։ Անդ գնացաք և զԲարսեղ եղբայրն իմ առաք և գնացաք ի Ղուզղունճուխն հետ Մահտեսի Եաղուպին և ընդ տղայոց նորին՝ և եկաք։

Բշի օրս (7 Օքտոմ.) յետին օր Պայրամի։ Յետ կէս աւուրն երոցք եղև ի Ճիպալուն, և ընդ սոյն ժամու Գաբրիէլի տղան ծնաւ։

Պահոցս Ուրբաթի (11 Օքտոմ.) Աստուածատուր վարդապետն և Յովանէս վարդապետն ի յԱստուածածին ի մէջ խցին ժողով արին վասն (Ռէրէ)։

ԻԱ–ին օր Բշի. Երուսաղէմայ ուխտաւորքն գնացին ընդ Աստուածատուր վարդապետիւն։

ԻԶ Շաբաթ օր. ղուլումճի արհեստաւորքն ամենայն թէֆէռուճ արարին ի Քէհատխանան։

Եւ Կիրակիս (27 Օքտոմ.) անձրև և ցուրտ արար։

Բշի (28 Օքտոմ.) երեկոյին եկան։ Բշի առաւօտուս յանցս ճանապարհին Ե Զ տեղ մարդիկք էին գլխատած։ Ցաւուրս յայսոսիկ խիստ մահ կայր. ամսոյս Ժ և Ե–էն սաստկացաւ։

Սեպտեմբեր ամիս օր Ուրբաթ։

Շաբաթի օրս (2 Սէպտ.) մեր Յարութիւն Չէլէպուն և Տէր Գասպարին Աստուածածնայ[1]) տղաքն մեռան։

1) Աշածնոյ.